

ուոյց մենաստանը, մնաց ժամանակ մը հոն եւ տուաւ իր փորձառութենէն խորհուրդներ վերանորոգչական գործին բարեաւ յաջողութեան համար։ Այն ստոյգ է, որ Մովսէս եւ Պօղոս վարդապետները ճանչցան հոս զիրար, կնքեցին սիրոյ եւ համերաշխութեան դաշինք գործելու ձեռն ի ձեռն եւ անսասան Աղգին եւ Եկեղեցւոյ վերադարձման եւ վերանորոգութեան համար։ Եւ ինչ որ Դաւրիթեցի կը պատմէ Պօղոս վարդապետի գործունէութեան եւ անոր դէմ յարուցուած հալածանքներու մասին, կ'արժէ հաւասարապէս Մովսէս վարդապետի առաքելական տքնութեանց համար։ Այս յայտնապէս կը տեսնուի Մովսէս վարդապետի այն խօսքերէն, զոր կը գրէր 1615ին Գրիգոր Կեսարացւոյ. «այժմի խորհուրդն մեր ա՛յս է հետ Պօղոս վարդապետին եւ անապատաւորացն եւ բարեպաշտ իշխանին Հայկազոյ, որ զնամք ի Սպահան, քարոզեմք Զուղայեցոցն զաստուածային բանն ի սուրբ հարցն կանոնաց»։

Թէ զացի՞ն Պօղոս եւ Մովսէս վարդապետները Սպահան, չգիտենք. բայց կ'երեւայ թէ Մեկքիսեդեկ վերահասու եղած էր խորհուրդին, որ ուղղուած էր իրեն դէմ։ Ըստ Դաւրիթեցւոյ «յետ ամաց ինչ անցանելոց» երբ Մեկքիսեդեկ ի Նախիջեւան կը պատահի Պօղոս վարդապետին, չի քաշուիր կաթողիկոսը «գլոյնս եւ զմաղձս դառնութեան, զոր ի բազում ժամանակաց մթերեալ ունէր ի սրտի», ժայթքել վարդապետին դէմ։ Այլ եւ այլ յան-